ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆ



ԱՐՏԱՀԵՐԹ ԶԵԿՈՒՅՑ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՊՐԻԼ-ՄԱՅԻՍ, 2023

ԵՐԵՎԱՆ 2023

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ԱՐՏԱՀԵՐԹ ԶԵԿՈՒՅՑ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՊՐԻԼ-ՄԱՅԻՍ, 2023

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Նախաբան……3

II. Մեթոդաբանություն……5

III. Սյունիքի մարզի Տեղ համայնքի բնակիչների իրավունքների խախտումները (փաստահավաք աշխատանք, ապացույցների հավաքագրում, բնակիչներին մտահոգող խնդիրների վերհանում)……7
1. Խաղաղ և անվտանգ ապրելու իրավունքը……8
2. Սեփականության իրավունքի խախտումները……11
3. Երեխաների կրթության իրավունքի ապահովման խնդիրները……13
4. Բնակիչների զբաղվածության ապահովման և ապրուստի միջոցը հոգալու հետ կապված խնդիրները……14

IV. Տեղ համայնքի խաղաղ բնակչության ահաբեկումը՝ որպես հայատյաց քաղաքականության հերթական դրսևորում……18

V. Ադրբեջանական ներխուժումների հետևանքով Գեղարքունիքի մարզի սահմանամերձ բնակավայրերում առաջացած մարդու իրավունքների հետ կապված խնդիրները /փաստահավաք աշխատանքներ Վերին և Ներքին Շորժա, Կութ, Սոթք, Նորաբակ և Կուտական բնակավայրերում/……23

VI. Առաջարկություններ……31

I. ՆԱԽԱԲԱՆ

1. 2020 թվականի 44-օրյա մարտական գործողություններից հետո Հայաստանի Հանրապետության սահմանային բնակավայրերում ադրբեջանական զինված ուժերի ստորաբաժանումների ագրեսիվ գործողությունների պատճառով խաթարվել է մարդկանց բնականոն կյանքը:
2. Ադրբեջանական զինված ուժերը, տեղակայված Սյունիքի և Գեղարքունիքի սահմանային բնակավայրերի անմիջական հարևանությամբ, հաճախակի կրակոցներ են արձակում, լարվածություն առաջացնում բնակչության շրջանում, խաթարում մարդկանց խաղաղ կյանքը, պարբերաբար իրականացնում քաղաքացիական բնակչության կյանքը դժվարացնող գործողություններ:
3. 2023 թվականի մարտ-ապրիլ ամիսներին ադրբեջանական զինված ուժերը տեղակայվել են Սյունիքի մարզի Տեղ համայնքի անմիջական հարևանությամբ, բնակիչների տներից մի քանի հարյուր մետր հեռավորությամբ: Ավելին, ապրիլի 11-ին բնակավայրի անմիջական հարևանությամբ ադրբեջանական զինված ուժերը դրսևորել են ագրեսիվ վարքագիծ. կրակոցներ են արձակել մոտակա հայկական դիրքերի ուղղությամբ, բնակավայրի հարևանությամբ կիրառել են խոշոր տրամաչափի զենքեր՝ իրական վտանգ ստեղծելով մարդկանց կյանքի ու առողջության համար: Այդ կրակոցների պատճառով զոհվել են քաղաքացիական բնակչությանը պաշտպանող 4 հայ զինծառայողներ, 6-ը ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:
4. Սույն արտահերթ զեկույցում ներկայացվում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի փաստահավաք աշխատանքներով արձանագրված մարդու իրավունքների խախտումները Սյունիքի մարզի Տեղ համայնքում, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի Վարդենիս խոշորացված համայնքի Վերին և Ներքին Շորժա, Կութ, Նորաբակ, Սոթք և Կուտական բնակավայրերում:
5. Փաստահավաք աշխատանքներով արձանագրվել է, որ ադրբեջանական զինված ուժերը և՛ Սյունիքի և՛ Գեղարքունիքի մարզերի սահմանային բնակավայրերի ուղղությամբ գործում են նույն նպատակով և նույն ձեռագրով: Մասնավորապես, զենքի ցուցադրմամբ ահաբեկում են մարդկանց, կրակում են համայնքների հարևանությամբ, գիշերային ժամերին լուսարձակներով թիրախավորում են բնակիչների տների պատուհանները, անօդաչու թռչող սարքեր են կիրառում համայնքների օդային տարածքներում և այլն:
6. Ադրբեջանական զինված ուժերը խրամատներ են փորել ու տեղակայվել բնակիչներին պատկանող խոտհարքներում, արոտավայրերում, հողատարածքներում՝ թույլ չտալով, որ մարդիկ անխոչընդոտ իրացնեն իրենց սեփականության իրավունքը և դրանով վաստակեն իրենց ապրուստի միջոցը: Ավելին, ադրբեջանական զինծառայողները գյուղացիների ցանքատարածություններում խրամատներ են փորել, վնասել են ցորենի, գարու

արտերը, թույլ չեն տալիս մարդիկ մոտենան իրենց հողատարածքներին, կրակոցներով ու զենքի ցուցադրմամբ ահաբեկում են բնակիչներին:

II. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

7. Զեկույցը նպատակ է հետապնդում վերլուծել և ներկայացնել 2023 թվականի ապրիլ և մայիս ամիսներին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գլխավորած աշխատանքային խմբերի՝ Սյունիքի և Գեղարքունիքի մարզեր կատարած այցերի ընթացքում իրականացված փաստահավաք աշխատանքների արդյունքները:
8. ՀՀ ինքնիշխան տարածքում ադրբեջանական զինծառայողների ներկայության արդյունքում մարդու իրավունքների խախտումներին Պաշտպանն անդրադարձ է կատարել 2022 թվականին հրապարակված արտահերթ զեկույցում[1]: Հարկ է նկատել, որ այս անգամ ևս իրականացված փաստահավաք աշխատանքները հաստատում են, որ ադրբեջանական զինծառայողների գործողությունների արդյունքում նախկինում արձանագրված խնդիրները ոչ միայն չեն վերացել, այլև ստացել են նոր դրսևորումներ և ի հայտ են եկել նոր խախտումներ:
9. Այսպես, 2023 թվականի ապրիլի 14-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գլխավորած աշխատանքային խումբն այցելել է Սյունիքի մարզ:
10. Այցի նպատակն էր ադրբեջանական զինված ուժերի զինծառայողների կողմից ս.թ. ապրիլ ամսին սահմանի տեղակայման կետերի ճշգրտման պատրվակով ՀՀ զինված ուժերի զինծառայողներին մոտենալու, սադրելու և հրազենային զենքերից, այնուհետև տարբեր տրամաչափի այլ զինատեսակներից կրակ վարելու դեպքից հետո տեղում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ փաստահավաք աշխատանքներ իրականացնելը, խախտումները հաստատող փաստեր և ապացույցներ հավաքագրելը, քաղաքացիական բնակչությանը մտահոգող խնդիրներին ծանոթանալը:
11. Մարդու իրավունքների պաշտպանը տեղում իրավիճակը քննարկել է Սյունիքի մարզպետի, Տեղ համայնքի ղեկավարի հետ: Հանդիպումներ և առանձնազրույցներ են եղել Տեղ համայնքի բնակիչների և տեղում ծառայություն իրականացնող զինված ուժերի ծառայողների հետ:
12. Հավաքագրված տեղեկությունները ճշգրտվել են զանգվածային լրատվության միջոցների, հասարակական կազմակերպությունների և Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության հետ համագործակցող դերակատարների հետ:
13. 2023 թվականի մայիսի 2-ին Մարդու իրավունքների պաշտպանի գլխավորած աշխատանքային խումբն այց է իրականացրել Գեղարքունիքի մարզ:
14. Պաշտպանի այցի նպատակն էր տեղում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ փաստահավաք աշխատանքներ իրականացնելը, դրանց վերաբերյալ հաստատող ապացույցներ հավաքագրելը, քաղաքացիական բնակչությանը մտահոգող խնդիրներին ծանոթանալը:

[1] https://ombuds.am/images/files/fd29830766027e9c10fcfaec2effee4f.pdf

15. Այցի շրջանակում առանձին հանդիպումներ են տեղի ունեցել Գեղարքունիքի մարզպետի, Վարդենիս խոշորացված համայնքի ղեկավարի, Վերին և Ներքին Շորժա, Կութ, Նորաբակ, Սոթք և Կուտական սահմանամերձ բնակավայրերի վարչական ղեկավարների հետ:
16. Մարդու իրավունքների պաշտպանը հանդիպումներ ու առանձնազրույցներ է ունեցել վերը նշված սահմանամերձ համայնքների բնակիչների հետ:
17. Հանդիպումներ ու քննարկումներ են եղել տեղերում ծառայություն իրականացնող զինված ուժերի ներկայացուցիչների հետ:
18. Հատուկ ուշադրության կենտրոնում են եղել քաղաքացիական բնակչության կյանքի և անվտանգության, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, սեփականության, կրթության և այլ հիմնական իրավունքների հետ կապված հարցերը:
19. Սույն զեկույցի կազմման աշխատանքների շրջանակում ՄԻՊ աշխատակազմն իրականացրել է նաև մեդիա հարթակներում հրապարակված նյութերի մշտադիտարկում, վերլուծել ՄԻՊ աշխատակազմին և ՄԻՊ Գեղարքունիքի և Սյունիքի մարզային ստորաբաժանումներին, այդ թվում՝ 24/7 թեժ գծին ուղղված ահազանգերը: Մշտադիտարկումը ներառել է նաև Ադրբեջանի զանգվածային լրատվական միջոցների և սոցիալական մեդիայի ուսումնասիրությունը:
20. Այցերի ընթացքում բարձրացված անհատական և համակարգային խնդիրների վերաբերյալ մանրամասն դիտարկումները, դրանց լուծման վերաբերյալ Պաշտպանի դիրքորոշումներն ու առաջարկները ներկայացվել են իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին:
21. Զեկույցը կառուցվածքային առումով բովանդակում է հետևյալ բաժինները՝ Տեղ համայնքում կատարված փաստահավաք աշխատանքների արդյունքում ստացված տեղեկությունների ներկայացում, ադրբեջանական զինված ուժերի հանցավոր վարքագծի պատճառահետևանքային կապը՝ Ադրբեջանի կողմից վարվող հայատյաց քաղաքականության հետ, Գեղարքունիքի մարզի սահմանային բնակավայրերում մարդու իրավունքների խախտումների ներկայացում, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկությունները բարձրացված խնդիրների առնչությամբ:

III.ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ (ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ԱՇԽԱՏԱՆՔ, ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ, ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՄՏԱՀՈԳՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ)

22. 2023 թվականի մարտ-ապրիլ ամիսներին ադրբեջանական զինված ուժերը տեղակայվել են Սյունիքի մարզի Տեղ համայնքի անմիջական հարևանությամբ, բնակիչների տներից մի քանի հարյուր մետր հեռավորությամբ:

23. Արդյունքում, ամբողջ Տեղ համայնքը, այդ թվում՝ դպրոցն ու մանկապարտեզը, մարդկանց բնակելի տները, հողատարածքները հայտնվել են ադրբեջանական զինված ուժերի ուղիղ նշանառության տակ:

24. 2023 թվականի ապրիլի ապրիլի 11-ին Սյունիքի մարզի Տեղ համայնքի ուղղությամբ ադրբեջանական զինված ուժերը ձեռնարկել են ագրեսիվ գործողություններ. պարբերաբար կրակոցներ են արձակել բնակավայրի հարևանությամբ, կիրառել են խոշոր տրամաչափի զենքեր, այդ թվում՝ ականանետեր:

25. Ադրբեջանական զինծառայողների գործողությունների պատճառով խախտվել են բնակիչների կյանքի և անվտանգության, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, սեփականության, կրթության և այլ հիմնական իրավունքները:

1. Խաղաղ և անվտանգ ապրելու իրավունքը

26. Պաշտպանի փաստահավաք խումբը Տեղ համայնք այցի ընթացքում արձանագրել է, որ ամբողջ բնակավայրը, այդ թվում՝ մարդկանց տները, դպրոցը, մանկապարտեզը, գտնվում են ադրբեջանական զինված ուժերի նշանառության և թիրախավորման ներքո[2]:

27. Բնակիչներից մեկի տունը, օրինակ, ադրբեջանական մոտակա մարտական դիրքից հեռու է ընդամենը 600 մետր, տնից պարզ տեսանելի են զինված ադրբեջանական զինծառայողները:

28. Տեղ գյուղի անմիջական հարևանությամբ ադրբեջանական զինված ուժերի ներկայության ու պարբերական կրակոցների պատճառով խաթարվել է մարդկանց խաղաղ և բնականոն կյանքը, բնակիչներն իրական մտահոգություններ ունեն անվտանգային հիմնահարցերի վերաբերյալ:

29. Փաստահավաք խմբին բնակիչներն իրենց մտահոգություններն են ներկայացրել այն մասին, որ ադրբեջանական զինված ուժերը պարբերաբար, այդ թվում՝ գիշերային ժամերին տարբեր տրամաչափի զինատեսակներից կրակոցներ են արձակում գյուղի անմիջական հարևանությամբ՝ իրական վտանգ ստեղծելով քաղաքացիական բնակիչների կյանքի և անվտանգության, հոգեկան և ֆիզիկական անձեռնմխելիության համար:

30. Բնակիչները տեղեկացրել են նաև, որ ադրբեջանական անօդաչու թռչող սարքերը, հատկապես՝ գիշերային ժամերին, թռիչքներ են կատարում գյուղի օդային տարածքում: Մարդիկ նշել են, որ նկատում են թռչող սարքերի լույսերը և լսում ձայները: Ստեղծված իրավիճակը բնակիչների՝ հատկապես ծերերի և երեխաների շրջանում լարվածություն է առաջացնում:

31. Անվտանգ պայմաններում ապրելու վերաբերյալ Տեղ գյուղի բնակիչների

[2] https://www.ombuds.am/am/site/ViewNews/2489

մտահոգություններն առավել են սրվել 2023 թվականի ապրիլի 11-ին գյուղի անմիջական հարևանությամբ ադրբեջանական զինված ուժերի ագրեսիվ վարքագծի ու նրանց կրակոցների պատճառով: Ընդ որում, այդ կրակոցների հետևանքով զոհվել են քաղաքացիական բնակչությանը պաշտպանող 4 հայ զինծառայողներ, 6-ը ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ[3]:

32. Պաշտպանի փաստահավաք խմբին Տեղ գյուղի բնակիչները պատմել են, որ 2023 թվականի ապրիլի 11-ին իրենց տներից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա ադրբեջանական զինված ուժերը կիրառել են խոշոր տրամաչափի զենքեր, այդ թվում՝ ականանետային միջոցներ, իրական վտանգ ստեղծելով իրենց կյանքի ու առողջության համար:

33. Բնակիչների տեղեկացմամբ՝ կրակոցները գյուղում պարզ լսվում էին, մարդիկ հայտնվել էին լարվածության և անորոշության մեջ, երեխաները, կանայք հրատապ թաքնվել էին տների նկուղներում:

[3] https://news.am/arm/news/754860.html

34. Անհերքելի է, որ ադրբեջանական զինված ուժերը խաղաղ բնակչությանը ահաբեկելու և նրանց շրջանում տագնապ առաջացնելու նպատակ են հետապնդում: Նրանց ներկայությունն անհնարին է դարձրել մարդկանց բնականոն ու անվտանգ կյանքը:

35. Այս առումով անհրաժեշտ է վկայակոչել անվտանգային խնդիրներին վերաբերող հարցերը կարգավորող իրավական ակտերը և խնդիրները դիտարկել դրանց լույսի ներքո:

36. ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովը, թիվ 4 ընդհանուր մեկնաբանությունների շրջանակներում անդրադառնալով բավարար կենսամակարդակի բաղադրատարր հանդիսացող բնակարանի իրավունքին, արձանագրել է. «Բնակարան ունենալու իրավունքը (...) պետք է դիտվի որպես ինչ-որ տեղ *ապահով, խաղաղ և արժանապատիվ ապրելու իրավունք*[4]»:

37. Ադրբեջանական զինծառայողների գործողությունների և նրանց ագրեսիվ վարքագծի պատճառով հնարավոր չի լինում ապահովել անձի՝ բնակարան ունենալու իրավունքի կարևոր բաղադրատարր հանդիսացող **խաղաղ ապրելու իրավունքը**:

38. Բացի այդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորվում է յուրաքանչյուր անձի՝ անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը, որը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ ներառում է նաև անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը[5]: Այս համատեքստում հարկ է նկատել, որ **պետությունները կրում են նեգատիվ պարտականություն՝ չձեռնարկելու այնպիսի միջոցներ, որոնք ապօրինի կերպով կմիջամտեն Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների իրացմանը:**

---

[4] Տե՛ս, ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովի թիվ 4 ընդհանուր մեկնաբանություններ, պար. 7:

[5] Տե՛ս, օրինակ՝ Բուտուրգան ընդդեմ Ռումինիայի գործով (Buturugă V. Romania) 2020 թվականի փետրվարի 11-ի վճիռը, դիմում թիվ 56867/15, Վավրիցկան և այլոք ընդդեմ Չեխիայի Հանրապետության գործով (Vavřička and Others v. The Czech Republic) 2021 ապրիլի 8-ի վճիռը, դիմում թիվ 47621/13:

39.Ավելին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ՄԻԵԿ 3-րդ և 8-րդ հոդվածների լույսի ներքո, ընդգծել է երեխաների և հասարակության այլ խոցելի անդամների՝ պետական պաշտպանությունից օգտվելու կարևորությունը, այն դեպքերում, երբ նրանց ֆիզիկական և հոգեկան բարեկեցությանը վտանգ է սպառնում[6]:

40.Ակնհայտ է, որ ադրբեջանական զինծառայողների դրսևորած վարքագիծը հակասում է նաև ՄԱԿ կանոնադրությամբ սահմանված սկզբունքներին և նպատակներին, հանդիսանում է խաղաղության սպառնալիք և ագրեսիայի դրսևորում:

41. Վերոնշյալի կապակցությամբ հարկ է հատուկ ընդգծել, որ ադրբեջանական զինված ուժերի իրականացրած գործողությունները, որոնք նպատակ են հետապնդում ահաբեկել, վախեցնել քաղաքացիական բնակչությանը, ակնհայտ անօրինական են և հակասում են միջազգային իրավունքին:

2. Սեփականության իրավունքի խախտումները

42. Տեղ համայնքում իրականացված փաստահավաք աշխատանքների արդյունքում արձանագրվել է, որ ադրբեջանական զինված ուժերը ֆիզիկապես ներկա են այն տարածքներում, որոնք սեփականության իրավունքը հավաստող օրինական փաստաթղթերով պատկանում են ՀՀ բնակիչներին կամ համայնքային սեփականություն են:

43. Բնակիչները չեն կարողանում օգտագործել ՀՀ իրավասու մարմինների կողմից տրամադրված սեփականության իրավունքի վկայականով իրենց պատկանող հողատարածքները, քանի որ դրանք գտնվում են ադրբեջանական զինված ուժերի վերահսկողության կամ նշանառության տակ:

44. Տեղ համայնքի բնակիչները նշել են նաև, որ ստեղծված իրավիճակի պատճառով չեն կարողանում օգտագործել սեփականության իրավունքով իրենց պատկանող արոտավայրերը, վարելահողերը, խոտհարքները: Դրանք ևս գտնվում են ադրբեջանական վերահսկողության կամ նշանառության տակ:

45. Մարդկանց մտահոգությունն այն է, որ զրկվել են իրենց ընտանիքի կայուն եկամուտը վաստակելու հնարավորությունից:

46.Բնակիչներից մեկը, օրինակ, հայտնել է, որ ադրբեջանական զինծառայողները խրամատներ են փորել իրեն պատկանող ցորենի արտի մեջ՝ այդպիսով զրկելով իրեն բերք ստանալու և ապրուստը հոգալու հնարավորությունից[7]:

---

[6] Տե՛ս, Վետյեն և այլոք ընդդեմ Գերմանիայի գործով կայացված որոշումը, պար. 74:

[7] Տե՛ս, https://www.azatutyun.am/a/32344009.html
https://www.azatutyun.am/a/32345185.html

47. Այս փաստերը հաստատվել են տեղական ինքնակառավարման մարմինների, ՀՀ զինված ուժերի ներկայացուցիչների հետ քննարկումների, բնակիչների վկայությունների, ինչպես նաև օբյեկտիվ ապացույցներով, լուսանկարների, մարդկանց սեփականության իրավունքի վկայականների միջոցով և այլն:

48. Այսպիսով, փաստահավաք աշխատանքների արդյունքում արձանագրվել է, որ ադրբեջանական զինծառայողների գործողությունների արդյունքում խախտվել է Տեղ համայնքի բնակիչների ինչպես սեփականության, այնպես էլ բավարար կենսամակարդակ ունենալու իրավունքը:

---

https://www.live24.am/106520

49.Սեփականության իրավունքի պաշտպանության իրավական հիմքերը դրված են ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային հիմնարար փաստաթղթերով: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք:

3. Երեխաների կրթության իրավունքի ապահովման խնդիրները

50. 2023 թվականի ապրիլի 11-ին Տեղ գյուղի անմիջական հարևանությամբ ադրբեջանական զինուժի կողմից տարբեր տրամաչափի զինտեխնիկայի կիրառումն առավել ինտենսիվ է եղել: Պարբերական դարձած կրակոցների պատճառով երեխաների մոտ առաջացել է տագնապի, անհանգստության ու անորոշության զգացողություն:

51. Տեղ համայնքի դպրոցը գտնվում է ադրբեջանական զինված ուժերի ուղիղ նշանառության և թիրախավորման ներքո: Տևական ժամանակ անդադար կրակոցների պատճառով խաթարվել է դասապրոցեսը: Դպրոցից տեսանելի են ադրբեջանական զինված ծառայողների դիրքերի տեղակայումները:

52.Ադրբեջանական զինված ուժերի գործողությունների հետևանքով ստեղծված իրավիճակը իրական անվտանգային խնդիր է առաջացրել երեխաների համար և խոչընդոտել է նրանց կրթության իրավունքի ապահովմանը: Սույն խնդրի համատեքստում պետք է նշել, որ կրթության իրավունքն անձի հիմնական իրավունքներից է, որի ապահովումն ունի կարևոր նշանակություն նաև անձի այլ իրավունքների և ազատությունների իրականացման համար:

53.Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 26-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 28-րդ հոդվածով ևս երաշխավորվում է երեխայի՝ կրթություն ստանալու իրավունքը:

54.ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի, Գլխավոր ասամբլեայի, Երեխաների իրավունքների կոմիտեի, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի կողմից ընդունված փաստաթղթերով կարևորվել է ոչ միայն ռազմական գործողությունների ընթացքում երեխաների իրավունքների խախտման անթույլատրելի լինելը, այլ նաև հետևանքների կանխարգելման այն հրամայականը, որն անհրաժեշտ է երեխաների առօրյա կյանքի, նրանց մտավոր և ֆիզիկական զարգացման երաշխավորման համար: Այս կառույցների կողմից բազմիցս դատապարտվել է նաև ուսումնական հաստատությունների, երեխաների խնամք և

պաշտպանություն իրականացնող հաստատությունների վրա հարձակումն ու նրանց թիրախավորումը:
55. Պետք է նշել նաև, որ զինված հակամարտության կամ ռազմական իրավիճակում ռազմական գործողությունների չմասնակցող երեխաների իրավունքները երաշխավորվում են «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» 1949 թ. Ժնևի կոնվենցիայով, ինչպես նաև 1977 թվականի հունիսի 8-ի թիվ 1 լրացուցիչ արձանագրությամբ:
56. Պաշտպանն արձանագրում է, որ Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի ուղղությամբ ադրբեջանական զինված ուժերի շարունակական ագրեսիվ վարքագիծն ուղղակիորեն ազդում է երեխաների բնականոն կյանքի, այդ թվում՝ կրթության իրավունքի պատշաճ իրացման վրա՝ կոպտորեն խախտելով միջազգային իրավունքով երաշխավորված հիմնարար իրավունքները:

4. Բնակիչների զբաղվածության ապահովման և ապրուստի միջոցը հոգալու հետ կապված խնդիրները

57. Տեղ համայնքի բնակիչներն ապրուստի հիմնական միջոցն ապահովում են գյուղատնտեսությամբ, այդ թվում՝ անասնապահությամբ ու հողագործությամբ զբաղվելով:
58. Համայնքի հողատարածքների մեծ մասը հայտնվել են ադրբեջանական վերահսկողության կամ նշանառության տակ:

59.Ադրբեջանական զինված ուժերը տեղակայվել են համայնքի բնակիչներին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքներում, խոտհարքներում, արոտավայրերում, ավելին՝ գյուղացիների ցանքատարածություններում խրամատներ են փորել, վնասել են ցորենի, գարու արտերը, թույլ չեն տալիս մարդիկ մոտենան իրենց հողատարածքներին[8], կրակոցներով ու զենքի ցուցադրմամբ ահաբեկում են բնակիչներին:

60. Ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ մարդիկ կանգնել են իրենց ընտանիքների ապրուստի միջոցը հոգալու լրջագույն խնդիրների առաջ: Խաղաղ բնակիչները չեն կարողանում զբաղվել անասնապահությամբ, գյուղատնտեսությամբ, ուստի դժվարացել է իրենց ընտանիքներին կենսական միջոցներով ապահովելու հնարավորությունը:

61. Փաստահավաք խմբին բնակիչները պատմել են, որ արոտավայրերը, որոնք իրենք մշտապես օգտագործել են կենդանիներին արածեցնելու համար, ներկայում հայտնվել են ադրբեջանական զինծառայողների վերահսկողության կամ ուղիղ նշանառության տակ: Այս վիճակը հանգեցրել է նրան, որ բնակիչները, այլ ելք չունենալով, ստիպված կրճատում են անասնագլխաքանակը, ինչը, շատ դեպքերում, հանդիսանում է ապրուստի միակ միջոցը: Դրա հետ մեկտեղ, բնակիչները չեն կարողանում զբաղվել հողագործությամբ և մշակել ցանքատարածությունները:

62.Մարդիկ հայտնել են, որ կորցնելով իրենց եկամտի հիմնական աղբյուրը՝ կանգնել են սոցիալական խնդիրների առաջ: Տասնյակ ընտանիքներ ոչ միայն

[8] https://www.azatutyun.am/a/32344009.html

դժվարությամբ են հոգում ընտանիքների կենսական կարիքները, այլև չեն կարողանում վճարել վարկերը:
63.Պաշտպանի փաստահավաք խմբին տեղական ինքնակառավարման մարմինները տեղեկացրել են, որ բնակիչների կորցրած հողատարածքների (այդ թվում՝ ցանքատարածությունների) դիմաց հաշվարկվում ու տրվում է փոխհատուցում:
64.Իհարկե, կարևոր է մարդկանց իրավունքներին վերաբերող խնդիրներին հետամուտ լինելն ու լուծումներ գտնելը, սակայն սեփականության իրավունքով մարդկանց պատկանող հողատարածքների կորստի դիմաց փոխհատուցումները կրում են մեկանգամյա բնույթ:
65.Մինչդեռ, այդ հողատարածքները մարդկանց եկամտի միակ աղբյուրն են և մեկանգամյա փոխհատուցում տրամադրելով՝ խնդիրները, այդ թվում՝ զբաղվածության ապահովման, վերջնական լուծում չեն ստանում: Այստեղ կարևոր է շահագրգիռ քննարկումների արդյունքում գտնել նշված խնդրի լուծմանն ուղղված համակարգային մոտեցումներ:
66. Վկայակոչված փաստերի ուսումնասիրությունը հաստատում է, որ ադրբեջանական զինված ուժերի կողմից կատարվող գործողությունները խախտում են Տեղ համայնքում խաղաղ բնակչության բավարար կենսամակարդակ ունենալու իրավունքը:
67.Այս առումով անհրաժեշտ է վկայակոչել «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 11-րդ հոդվածը, որում, ի թիվս այնի, սահմանվում է, որ **դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի համար և նրա ընտանիքի համար բավարար այնպիսի կենսամակարդակի իրավունքը, որն իր մեջ ներառում է բավարար սնունդ, հագուստ ու բնակարան և կյանքի պայմանների անընդհատ բարելավման իրավունքը:**
68. «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի այնպիսի կենսամակարդակի, ներառյալ սնունդը, հագուստը, բնակարանը, բժշկական խնամքը և սոցիալական անհրաժեշտ սպասարկումը, որն անհրաժեշտ է իր և իր ընտանիքի առողջությունն ու բարեկեցությունը պահպանելու համար, և գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ ապրուստի միջոցներից զրկվելու դեպքում՝ ապահովելու իրավունք:
69. Ավելին, ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովն իր թիվ 3 ընդհանուր մեկնաբանություններում[9] հաստատել է, որ մասնակից պետություններն ունեն հիմնական պարտավորություն՝ ապահովելու

[9] Committee on Economic, Social and Cultural Rights, general comment No. 3 (1990) on the nature of States parties obligations (հոդ. 2 (1) o the Covenant), պար. 10

Դաշնագրի յուրաքանչյուր իրավունքի առնվազն նվազագույն էական մակարդակի բավարարումը:

70.ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի «Տնտեսական պաշտպանության, սոցիալական և մշակութային իրավունքները հակամարտության մեջ» վերտառությամբ զեկույցի շրջանակներում արձանագրվել է, որ պետության պոզիտիվ պարտավորությունները, որոնք կապված են առողջության, սննդի, բնակարանի, ջրի հասանելիության և կրթության իրավունքների հետ, նույնիսկ արտակարգ իրավիճակների կամ զինված բախումների ժամանակ, շարունակում են ուժի մեջ մնալ[10]:

71. Այսպիսով, պետք է արձանագրել, որ պետությունների կողմից ճանաչվում է յուրաքանչյուրի և նրա ընտանիքի բավարար կենսամակարդակի իրավունքը, ինչն իր հերթին ենթադրում է, որ **անդամ պետությունները կրում են վկայակոչված իրավունքների ապահովմանն ուղղված գործողությունների ձեռնարկման պոզիտիվ պարտականություն:**

72. Զեկույցում ներկայացված փաստերը հստակ ցույց են տալիս, որ ստեղծված իրավիճակի պատճառով Տեղ համայնքի խաղաղ բնակչությունը զրկված է բավարար կենսամակարդակ ունենալու իրավունքից օգտվելու հնարավորությունից՝ նկատի ունենալով ադրբեջանական զինված ուժերի կողմից դրսևորվող վարքագիծը:

[10] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի «Տնտեսական պաշտպանության, սոցիալական և մշակութային իրավունքները հակամարտության մեջ» վերտառությամբ զեկույց, կետ 15: https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Issues/ESCR/E-2015-59.pdf

IV. ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՂԱՂ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՀԱԲԵԿՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՏՅԱՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

73. Ադրբեջանի կողմից վարվող հայատյաց և էթնիկ հիմքով ատելության քաղաքականության, ինչպես նաև հայերի նկատմամբ թշնամանքի հրապարակային քարոզչության իրականացման հերթական հետևանքն արձանագրվել է Տեղ գյուղի ուղղությամբ ադրբեջանական զինված ուժերի հայտնվելուց անմիջապես հետո:

74. Նրանց ներկայությունը սահմանամերձ բնակավայրերի ուղղությամբ և իրականացրած գործողությունները, որոնք, ի թիվս այլնի, կրում են խաղաղ բնակչությանը ահաբեկելու, մշտապես լարված և սթրեսային վիճակում պահելու նպատակ, մշտապես խրախուսվել են ամենաբարձր մակարդակով[11], ինչն իր հերթին գեներացվել է ադրբեջանական հասարակությունում և իր արտացոլումը գտել սոցիալական ցանցերի ադրբեջանական տիրույթում, օրինակ, «Տելեգրամ»-ում, «Տիկ Տոկ»-ում, «Ֆեյսբուք»-ում և այլն:

75. Ադրբեջանի կողմից պետական մակարդակով իրականացվող հայատյացության և էթնիկ հիմքով ատելության քաղաքականությանը Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է բազմաթիվ զեկույցներով[12], որոնք ուղարկվել են նաև մարդու իրավունքների պաշտպանության մանդատ ունեցող միջազգային կազմակերպություններին:

76. Պաշտպանի աշխատակազմի կողմից մեդիա տիրույթի ուսումնասիրությունների արդյունքում կրկին հաստատվում է այն հանգամանքը, որ սոցիալական ցանցերի ադրբեջանական օգտատերերի մեկնաբանությունները շարունակում են արտացոլել ակնհայտ թշնամանք ու հայատյացություն:

77. Օրինակ, Տեղ գյուղի անմիջական հարևանությամբ 2023 թվականի ապրիլի 11-ին Ադրբեջանի զինված ուժերի ագրեսիայից անմիջապես հետո ադրբեջանական մեդիա տիրույթում նոր թափ ստացան հայերի նկատմամբ բռնության կոչերը, ատելության և թշնամանքի քարոզը: Եվ այդ ամենն ուղղվում էր հենց Տեղ գյուղի խաղաղ բնակիչներին:

---

[11] Տե՛ս, օրինակ, http://ask.org.az/en/2020/09/28/appeal-of-president-ilham-aliyev-to-the-people/
https://www.voltairenet.org/article211050.html
https://teleqraf.com/news/siyaset/340649.html
https://www.xalqcebhesi.az/news/politics/110634.html
https://bit.ly/43chk8S
https://bit.ly/3Iljaws

[12] Տե՛ս, օրինակ, https://ombuds.am/images/files/2032f021fe81176414a649d588ad0e86.pdf
https://ombuds.am/images/files/3101f60c869b0f378dbc737b002e5054.pdf
https://ombuds.am/images/files/d29fef274a384cab5fb0e3d14f16e6e4.pdf

78.Մասնավորապես, «Տելեգրամ» հարթակում սկսեցին տեղադրվել զոհված հայ զինծառայողների լուսանկարները՝ կրկին ատելության խոսք պարունակող մեկնաբանություններով (ներկայացված է ստորև):

79.Ստորև ներկայացվում է ադրբեջանական սոցիալական հարթակներում տարածված ատելություն ու թշնամանք պարունակող մեկնաբանությունների այլ բազմաթիվ օրինակներից մի քանիսը.











«Արդյո՞ք չի կարելի կրակով միանգամից նրանց բոլորին ոչնչացնել »



«Միանգամից պետք է ոչնչացնել Հայաստանը»
«Ատում եմ հայերին»

«Հայ առնետների լուսանկարները, որոնք այսօր գնացին իրենց Աստծո մոտ»: «Նրանց վրա հողի փոխարեն թող աթար լինի»:

80. Ադրբեջանական զինված ուժերի կողմից իրականացված բոլոր գործողությունների աղբյուրը հայատյացության հետևողական քաղաքականությունն է, որն իրականացվում է պետության կողմից՝ դրսևորվելով կրթական բովանդակությունից սկսած՝ հանրային կյանքի բոլոր ոլորտներում և հենց այդ երկրի բարձրագույն իշխանությունների հայտարարություններում:

81. Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ ՄԱԿ-ի Ռասայական խտրականության վերացման կոմիտեն «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայով» ստանձնած՝ Ադրբեջանի 10-ից 12-րդ պարբերական հաղորդումների վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում **մտահոգություն է հայտնել սոցիալական ցանցերում, այդ թվում՝ հասարակական գործիչների և պետական պաշտոնյաների կողմից ազգությամբ հայերի նկատմամբ ռասիստական կարծրատիպերի տարածման կապակցությամբ (կետ 4(c)) և Ադրբեջանի ղեկավարությանն առաջարկել է միջոցներ ձեռնարկել պաշտոնատար անձանց և հանրային հաստատությունների կողմից ազգությամբ հայերի դեմ ուղղված ատելության խոսքի, ռասայական ատելության և խտրականության հրահրման և խթանման մշտադիտարկման ու դրանց դեմ պայքարի ուղղությամբ** (կետ 5(d))[13]:

82. Կարևոր է նշել, որ 2021 թվականի դեկտեմբերի 7-ին ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը հրապարակել է Ռասայական խտրականության բոլոր

[13]https://tbinternet.ohchr.org/Treaties/CERD/Shared%20Documents/AZE/CERD_C_AZE_CO_10-12_49770_E.pdf (անգլերեն), դիտված՝ 16.09.2022թ.:

ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի շրջանակներում միմյանց դեմ քննվող դատական գործերի շրջանակներում Հայաստանի և Ադրբեջանի կողմից ներկայացված հրատապ միջոցների վերաբերյալ իր որոշումները[14], որոնց համաձայն՝ առկա է կոնվենցիայի շրջանակներում հայերի իրավունքներին անդառնալի վնաս հասցնելու անմիջական վտանգ:

83.Դատարանն Ադրբեջանին պարտավորեցրել է՝

ա) բռնությունից և մարմնական վնասվածքներից պաշտպանել բոլոր այն անձանց, որոնք 2020թ. հակամարտությամբ պայմանավորված հայտնվել և պահվում են Ադրբեջանում, ապահովել նրանց անվտանգությունն ու օրենքի առաջ հավասարությունը,

բ) ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները կանխելու ազգությամբ և էթնիկ հայերի դեմ ուղղված ռասայական խտրականության և ատելության հրահրումն ու խթանումը, այդ թվում՝ պաշտոնատար անձանց և պետական հաստատությունների կողմից,

գ) ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները կանխելու և պատժելու հայկական մշակութային ժառանգության, այդ թվում՝ եկեղեցիների և պաշտամունքի այլ վայրերի, հուշարձանների, ուղենիշային պատկերների, գերեզմանատների և այլ ցուցանմուշների հանդեպ վանդալիզմի և պղծման գործողությունները:

84.Հատկանշական է նաև, որ **Դատարանն իր որոշմամբ Ադրբեջանին պարտավորեցրել է ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու խտրականությունն ու դրա հրահրումը, այդ թվում՝ հասարակական գործիչների և պետական պաշտոնյաների կողմից:**

[14] https://www.icj-cij.org/public/files/case-related/180/180-20211207-ORD-01-00-EN.pdf

V. ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ /ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՎԵՐԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՇՈՐԺԱ, ԿՈՒԹ, ՍՈԹՔ, ՆՈՐԱԲԱԿ ԵՎ ԿՈՒՏԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ/

85.2023 թվականի մայիսի 2-ին Մարդու իրավունքների պաշտպանի փաստահավաք խումբն այցելել է Գեղարքունիքի մարզի սահմանամերձ բնակավայրեր: Մասնավորապես, այցեր են իրականացվել Վերին և Ներքին Շորժա, Կութ, Սոթք, Նորաբակ և Կուտական բնակավայրեր[15]:

86. Պաշտպանի այցի նպատակն էր տեղում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ փաստահավաք աշխատանքներ իրականացնելը, դրանց վերաբերյալ հաստատող ապացույցներ հավաքագրելը, քաղաքացիական բնակչությանը մտահոգող խնդիրներին ծանոթանալը:

87.Գեղարքունիքի մարզի սահմանային բնակավայրերում մարդու իրավունքների վիճակին Պաշտպանը անդրադարձ է կատարել ինչպես արտահերթ զեկույցներում[16], այնպես էլ տարեկան հաղորդումներում[17]: Ընդ որում, զեկույցներում մանրամասն (համայնք առ համայնք) վերլուծվել ու ներկայացվել են մարդու իրավունքների տեսանկյունից առկա խնդիրները, դրանց պատճառները, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերելի միջազգային իրավական կարգավորումները: Զեկույցի այս բաժնում միջազգային իրավական կարգավորումներին յուրաքանչյուր դեպքում առանձին անդրադարձ չի կատարվել, քանի որ իրավունքների համանման խախտումների վերաբերյալ միջազգային իրավական չափորոշիչների մասին խոսվել է զեկույցի նախորդ բաժնում:

88. Հարկ է նշել, որ Գեղարքունիքի սահմանային համայնքներ Պաշտպանի նախորդ տարիների (2020-2022թթ.) այցերի համեմատ 2023 թվականի մայիսի 2-ի այցի ընթացքում իրավունքների խախտումների վերացման դրական միտումներ չեն արձանագրվել: Ավելին, ադրբեջանական զինված ուժերի տեղակայումների ու ագրեսիվ վարքագծի պատճառով մարդկանց հիմնարար իրավունքների խախտումները շարունակվում են:

89. Մասնավորապես, բնակիչները մտահոգություններ են հայտնել իրենց կյանքի և անվտանգության, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, սեփականության,

---

[15] https://ombuds.am/am/site/ViewNews/2512

[16] Տե՛ս, օրինակ, https://ombuds.am/images/files/fd29830766027e9c10fcfaec2effee4f.pdf https://ombuds.am/images/files/88015d8ec9e48d869bd8b706233613dd.pdf https://ombuds.am/images/files/ff7396ae7e860c201bbfd6f410fef5a4.pdf

[17] Տե՛ս, օրինակ, Պաշտպանի 2020-2021թթ տարեկան հաղորդումները, ինչպես նաև 2022թ. Պաշտպանի իրականացրած գործունեության վերաբերյալ ամփոփ հաղորդումը:

կրթության և այլ հիմնական իրավունքների ապահովման ու պատշաճ իրացման վերաբերյալ: Բնակիչները բարձրացրել են արոտավայրերի, խոտհարքների և վարելահողերի օգտագործման, անասնապահությամբ զբաղվելու և իրենց ընտանիքների կենսական կարիքներն ապահովելու հետ կապված խնդիրներ:

90. Զեկույցի նշված բաժնում առանձին-առանձին անդրադարձ է կատարվել Պաշտպանի փաստահավաք խմբի կողմից սահմանամերձ համայնքներում կատարված աշխատանքներին և արձանագրված խնդիրներին:

91. Այսպես, փաստահավաք խումբը նախ այցելել է սահմանամերձ Վարդենիս խոշորացված համայնքի **Վերին և Ներքին Շորժա** բնակավայրեր, ինչպես նաև Վերին Շորժայի սարատեղի:

92.Բնակիչները պատմել են, որ ադրբեջանական զինծառայողների կողմից հաճախակի են կրակոցները բնակավայրի անմիջական հարևանությամբ, այդ թվում՝ խոշոր տրամաչափի զենքերով, ինչն առաջացնում է անհանգստություն, տագնապ և լարված մթնոլորտ[18]: Բացի այդ, նշել են, որ ադրբեջանական զինծառայողների տեղակայումների պատճառով չեն կարողանում օգտագործել իրենց վարելահողերը, արոտավայրերը և խոտհարքերը: Դրանք բոլորը գտնվում են կա՛մ ադրբեջանական վերահսկողության կա՛մ ուղիղ նշանառության տակ:

93.Հատկանշական է, որ մարդիկ ունեն այդ հողատարածքների նկատմամբ ՀՀ իրավասու մարմնի կողմից տրված սեփականության իրավունքի վկայականներ: Մինչդեռ, փաստացի զրկված են սեփականության իրավունքի իրացման հնարավորությունից:

94.Վերին և Ներքին Շորժա համայնքներում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է նաև, որ շարունակում է լուրջ խնդիր մնալ ջրի՝ որպես

[18] http://surl.li/gveeu , https://bit.ly/3I5Sujc

մարդու կյանքի և առողջության համար հիմնային նշանակություն ունեցող հանրային բարիքի հասանելիությունը: Մարդիկ հայտնել են, որ այդ խնդիրն առաջացել է ադրբեջանական զինծառայողների կողմից բնակավայրի ջրի պաշարները վերահսկողության տակ վերցնելուց հետո, ինչը խնդրահարույց է նաև առողջության համար անվտանգ և որակյալ ջրի ապահովման տեսանկյունից:

95.Ջրի հասանելիությունը հիմնարար է մարդու իրավունքների իրացման համար, ջուրը մարդու կյանքի և առողջության համար հիմնային նշանակություն ունեցող հանրային բարիք է[19]:

96. Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ ադրբեջանական զինծառայողներն իրենց բացահայտ հանցավոր արարքներով վտանգել են խաղաղ բնակիչների կյանքն ու առողջությունը, ամբողջությամբ խաթարել նրանց բնականոն կյանքն ու հոգեկան անձեռնմխելիությունը: Ադրբեջանական զինված ուժերը շարունակում են բնակիչներին հոգեբանական ճնշման տակ պահելու բացահայտ քաղաքականությունը:

97. **Կութ** բնակավայրում փաստահավաք աշխատանքների ժամանակ գյուղացիները տեղեկացրել են, որ ադրբեջանական զինծառայողները տեղակայվել են բնակավայրին շատ մոտ, ինչի պատճառով նրանք նույնպես չեն կարողանում օգտագործել սեփականության իրավունքով իրենց պատկանող վարելահողերը, արոտավայրերը և խոտհարքերը:

98. Մարդիկ նշել են, որ չեն կարողանում զբաղվել գյուղատնտեսությամբ, որը հանդիսանում է իրենց ապրուստի հիմնական միջոցը: Գյուղացիների տեղեկացմամբ՝ խոտհարքների բացակայության պատճառով ստիպված են եղել վաճառել կենդանիներին, ինչի հետևանքով էականորեն պակասել է անասնագլխաքանակը:

99. Բնակիչները մտահոգություններ են հայտնել անվտանգային հարցերի վերաբերյալ: Նշել են, որ պարբերաբար ադրբեջանական մարտական դիրքերից կրակոցներ են արձակվում գյուղի ուղղությամբ, պարզ լսվում են կրակոցների ձայները, ինչը լարվածություն է ստեղծում մարդկանց մոտ[20]:

[19] http://surl.li/gvdsd
[20] https://bit.ly/3MoZZUY

100. Վարդենիս համայնքի սահմանամերձ **Սոթք** բնակավայրում ևս արձանագրվել են մի շարք խնդիրներ: Փաստահավաք խմբին բնակիչները տեղեկացրել են, որ գյուղը գտնվում է Ադրբեջանի զինված ուժերի ուղիղ դիտարկման ներքո, ադրբեջանական զինված ուժերի տեղակայման պատճառով զրկվել են արոտավայրերի մեծ մասից:

101. Գյուղացիները հավելել են, որ պարբերաբար կրակոցների ձայներ են լսում, ադրբեջանական զինուժը, հատկապես գիշերային ժամերին, անօդաչու թռչող սարքերով պարբերաբար ահաբեկում է իրենց:

102. Պաշտպանի փաստահավաք խմբին բնակիչները պատմել են, որ ադրբեջանական զինված ուժերի ահաբեկումների պատճառով չեն կարողանում իրենց բնակավայրում զբաղվել գյուղատնտեսությամբ, այդ թվում՝ անասնապահությամբ:

103. Ըստ բնակիչների՝ շարունակում է չլուծված մնալ բնակավայրի խմելու և ոռոգման ջրի խնդիրը, քանի որ ջրահավաք ավազանը հայտնվել է Ադրբեջանի զինված ուժերի վերահսկողության տակ:

104.2020 թվականից խմելու ջրի ջրագծի կառուցման աշխատանքները մնացել են անավարտ, քանի որ ջրահավաք ավազանը հայտնվել է ադրբեջանական ուղիղ նշանառության տակ, ինչը խոչընդոտում է շինարարական աշխատանքների իրականացմանը:

105. Բնակիչները լուրջ մտահոգություն են հայտնել Սոթքի ոսկու հանքավայրի բնականոն աշխատանքի ապահովման խոչընդոտների վերաբերյալ:

106. Մասնավորապես, 2020 թվականի 44-օրյա մարտական գործողություններից հետո «Գեոպրոմայնինգ Գոլդ» ընկերության կողմից շահագործվող Սոթքի ոսկու հանքավայրի տարածքի մեծ մասն անցել է Ադրբեջանի վերահսկողության տակ, ինչի պատճառով խնդիրներ են առաջացել հանքի բնականոն աշխատանքի հետ կապված:

107.Համայնքի ղեկավարը հայտնել է, որ հանքավայրի աշխատանքային ծավալները 2020 թվականից ի վեր նվազել են, ինչը հանգեցրել է աշխատողների քանակի զգալի կրճատման: Այս ամենի հիմնական պատճառը Ադրբեջանի զինծառայողների կողմից հանքավայրի ուղղությամբ պարբերական բնույթ կրող կրակոցներն են:

108. Մարդիկ նշել են, որ կրակոցների պատճառով հանքավայրի աշխատանքները հարկադրաբար և պարբերաբար դադարեցվում են, իսկ աշխատակիցները՝ տարհանվում: Այդ կրակոցները հաճախ լինում են թիրախային՝ ուղղված նաև հանքավայրում շահագործվող տեխնիկային[21]:

109. Վերջին շրջանում ադրբեջանական զինված ուժերի պարբերական դարձած կրակոցների պատճառով հանքավայրի տնօրինությունը ստիպված է եղել որոշում կայացնել դադարեցնել հանքավայրի աշխատանքները՝ աշխատողների անվտանգության նկատառումներից ելնելով, իսկ աշխատողներն ուղարկվել են հարկադիր պարապուրդի:

110. Ընդ որում, «Գեոպրոմայնինգ Գոլդ» ընկերությունը ևս պաշտոնապես հաստատել է, որ ադրբեջանական կրակոցների պատճառով հանքավայրում աշխատանքները դադարեցվել են[22]:

[21] https://www.youtube.com/watch?v=c0ifsBF29Ak&t=216s
[22] www.azatutyun.am/a/32367260.html

111. Հարկ է նշել, որ Սոթքի բնակչության մեծ մասը հիմնական ապրուստի միջոցը հոգում է հանքավայրում աշխատելու միջոցով: Արդյունքում, ինչպես տեղեկացնում էին բնակիչները, հանքավայրի աշխատանքների դադարեցումից հետո ոչ միայն դարձել են գործազուրկ, այլևս կանգնել են ապրուստի միջոցը հոգալու լուրջ խնդիրների առաջ:

112. Այսպիսով, ադրբեջանական կողմի գործողությունների հետևանքով ստեղծված իրավիճակի հետ կապված հավաքագրված փաստերը վկայում են, որ խախտվում են բնակիչների սեփականության, աշխատանքային իրավունքները, վտանգվում են նրանց կյանքի, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը, բնակիչները զրկվում են գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ զբաղվելու հնարավորությունից:

113. Նորաբակ բնակավայրում իրականացվող փաստահավաք աշխատանքների արդյունքում պարզվել է, որ ադրբեջանական զինծառայողները տեղակայվել են բնակավայրին շատ մոտ, ինչի պատճառով գյուղացիներին սեփականության իրավունքով պատկանող արոտավայրերի, խոտհարքերի և վարելահողերի մեծ մասը անցել է ադրբեջանական զինված ուժերի վերահսկողության կամ ուղիղ նշանառության ներքո:

114. Բացի այդ, գյուղացիները հայտնել են, որ խոտհարքերի բացակայության պատճառով չեն կարողանում ապահովել մանր և խոշոր եղջերավոր կենդանիների կերը: Ուստի, ստիպված են եղել մորթել կենդանիներին՝ զրկվելով իրենց միակ եկամտի աղբյուրից. զգալի պակասել է անասնագլխաքանակը:

115. Բնակավայրի ջրային պաշարները հայտնվել են Ադրբեջանի զինված ուժերի վերահսկողության տակ: Գյուղի 6 բնական աղբյուրներից 5-ը գտնվում են ադրբեջանական տիրապետության ներքո: Մարդիկ տներում ջուր չունեն, ստիպված են լինում խմելու և կենցաղային կարիքները հոգալու նպատակով դույլերով գյուղի այլ մասերից ջուր տեղափոխել իրենց տներ:

116. Բնակիչները լուրջ անհանգստություն ունեն անվտանգային հարցերի վերաբերյալ: Ադրբեջանի զինծառայողները կրակ են բացում գյուղի ուղղությամբ, դրանով ահաբեկում են բնակիչներին, խոչընդոտում են գյուղատնտեսական

աշխատանքների իրականացմանը՝ ձգտելով անընդհատ վախի ու համայնքում ապրելու անհարմարողականության մթնոլորտ ստեղծել:

117. Հոգեբանական լարվածություն ստեղծելու նպատակով հեռահար լույսեր, լազերներ են ուղղում տների ուղղությամբ, ժամանակ առ ժամանակ անօդաչու թռչող սարքերով դիտարկում են գյուղը:

118. Վերոգրյալն իր ուղղակի ազդեցությունն է ունենում անձանց իրավունքների իրացման վրա, քանի որ անմիջականորեն սպառնում է անվտանգությանն ու բավարար կենսամակարդակ ունենալու իրավունքին:

119. Պաշտպանի փաստահավաք խումբն այցելել է նաև **Կուտական** բնակավայր: Ադրբեջանական զինծառայողները հայտնվել են բնակավայրի անմիջապես հարևանությամբ գտնվող բլրի վրա և ամբողջ գյուղը հայտնվել է դիտարկման տակ:

120. Պարբերական դարձած կրակոցները անհանգստություն ու լարվածություն են առաջացնում մարդկանց մոտ:



121. Խոտհարքները, արոտավայրերը, բնակիչների հողատարածքները հայտնվել են ադրբեջանական զինծառայողների վերահսկողության կամ ուղիղ նշանառության տակ: Անվտանգային նկատառումներից ելնելով՝ մարդիկ խուսափում են գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնելուց:

122. Այսպիսով, Պաշտպանն արձանագրում է, որ այցելած բոլոր համայնքներում բնակիչները պատմել են ադրբեջանական զինված ուժերի կողմից համայնքների բնակիչների հիմնարար իրավունքները խախտող գործողությունների մասին, որոնք համակարգված ու միատեսակ ձեռագրով են իրականացվում: Մասնավորապես՝ ադրբեջանական զինված ուժերը կրակում են համայնքների հարևանությամբ, խաղաղ բնակավայրերի մոտ կիրառում են խոշոր տրամաչափի զենքեր, այդ թվում՝ հրետանի ու ականանետեր, զենքի ցուցադրմամբ ահաբեկում են մարդկանց, գիշերային ժամերին լուսարձակներով թիրախավորում են բնակիչների տների պատուհանները, անօդաչու թռչող սարքեր են կիրառում համայնքների օդային տարածքներում և այլն:

123. Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ ադրբեջանական զինծառայողներն իրենց բացահայտ հանցավոր արարքներով վտանգել են Գեղարքունիքի մարզի սահմանամերձ բնակավայրերի խաղաղ բնակիչների կյանքն ու առողջությունը, ամբողջությամբ խաթարել նրանց բնականոն կյանքն ու հոգեկան անձեռնմխելիությունը: Ադրբեջանական զինված ուժերը շարունակում են բնակիչներին հոգեբանական ճնշման տակ պահելու բացահայտ և համակարգված քաղաքականությունը:

VI. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նկատի ունենալով սահմանամերձ բնակավայրերում մարդկանց իրավունքների պաշտպանության առաջնահերթությունը և առկա խնդիրներին պատշաճ արձագանքելու անհրաժեշտությունը՝ Պաշտպանը չի սահմանափակվում միայն հիմնական խնդիրների մատնանշմամբ, այլ ներկայացնում է նաև դրանց լուծմանն ուղղված առաջարկներ: Այսպես.

Փաստահավաք աշխատանքների և համապարփակ վերլուծությունների արդյունքներով, Պաշտպանը նախևառաջ արձանագրում է ադրբեջանական զինված ուժերի ագրեսիվ վարքագծի հետևանքով առաջացած բնակչության անվտանգային հիմնահարցերի լուծման հրատապ անհրաժեշտությունը: Մասնավորապես, ադրբեջանական զինված ուժերի անօրինական ներկայությունը Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի հարևանությամբ անվտանգային լրջագույն խնդիրներ է առաջացրել շրջակա բնակավայրերի քաղաքացիական բնակչության և ենթակառուցվածքների համար, որոնք գտնվում են անմիջական թիրախավորման և նշանառության ներքո:

Հրատապ է սահմանամերձ բնակավայրերի բնակիչների հոգեկան անձեռմխելիության իրավունքի ապահովմանն ուղղված աշխատանքների իրականացումը և հանրության շրջանում լարվածության մթնոլորտի ձևավորումը կանխարգելելու ուղղությամբ միջոցների ձեռնարկումը: Այս առումով առանցքային է սահմանամերձ բնակավայրերի բնակիչների կարիքների գնահատման արդյունքներով պայմանավորված աջակցության տրամադրումը, ինչպես նաև տեղեկատվական քաղաքականության մշակումն ու իրականացումը, որը պետք է ուղղված լինի բնակիչների շրջանում անորոշության ու լարվածության մթնոլորտի կանխարգելմանը: Դիտարկված բոլոր համայնքներում բնակիչները մտահոգություն են հայտնել պաշտպանության, ապահովության և անվտանգային հարցերի վերաբերյալ: Կարևոր է նշել, որ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են պաշտպանությունը և անվտանգությունը, պետությունը պետք է հստակ և կշռադատված քաղաքականություն իրականացնի՝ համաչափ կառավարելով

տեղեկատվական հոսքերը և մշակելով ապատեղեկատվությունը բացառելուն ուղղված հստակ քաղաքականություն:

Պաշտպանի աշխատակազմի կողմից այցելած բոլոր համայնքներում, անվտանգային լրջագույն խնդիրներով պայմանավորված, խնդիր է բնակիչների *բավարար կենսամակարդակի և զբաղվածության ապահովման հարցը:* Մարդկանց հողատարածքները գտնվում են ադրբեջանական ուղիղ նշանառության կամ վերահսկողության տակ, որի պատճառով գյուղացիները չեն կարողանում զբաղվել գյուղատնտեսությամբ, այդ թվում՝ հողագործությամբ և անասնապահությամբ: Պաշտպանն ընդգծում է, որ սահմանամերձ համայնքներում զբաղվածության խնդրի կարգավորումը կարևորագույն նշանակություն ունի մարդկանց սոցիալական իրավունքների երաշխավորման և կենսապայմանների բարելավման տեսանկյունից: Հետևաբար, անհրաժեշտ է բնակիչների համար մշակել զբաղվածության ապահովմանը միտված կոնկրետ մեթոդաբանություն՝ հնարավորինս սեղմ ժամկետում գործի դնելով նոր աշխատատեղերի ստեղծումից մինչև գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ծրագրեր:

Այս առնչությամբ, ադրբեջանական զինծառայողների գործողությունների արդյունքում խախտվում է նաև սահմանամերձ բնակավայրերի բնակիչների *սեփականության իրավունքը:*

Իրավասու պետական մարմինները տեղեկացրել են, որ բնակիչների կորցրած հողատարածքների (այդ թվում՝ ցանքատարածությունների) դիմաց հաշվարկվում ու տրվում է փոխհատուցում, սակայն դա կրում է մեկանգամյա բնույթ: Այս կապակցությամբ հարկ է նկատի ունենալ, որ հողատարածքները հաճախ մարդկանց եկամտի միակ աղբյուրն են և մեկանգամյա փոխհատուցում տրամադրելով՝ խնդիրները վերջնական լուծում չեն ստանում: Ուստի, կարևոր է շահագրգիռ քննարկումների արդյունքում գտնել նշված խնդրի լուծմանն ուղղված համակարգային մոտեցումներ՝ հնարավորինս երաշխավորելով սեփականության իրավունքի և այլ հիմնարար իրավունքների պաշտպանությունը:

Վերը նշվածի հետ մեկտեղ *պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին* առաջարկվում է՝

- սահմանամերձ բնակավայրերի բնակիչների համար ապահովել իրենց իրավունքների և անվտանգային հարցերի վերաբերյալ կանոնավոր, հստակ և մատչելի հանրային հաղորդակցություն: Կարևոր է մարդկանց հետ պարբերաբար հանդիպումների շրջանակներում թիրախային տեղեկատվության տրամադրումը, որպեսզի բնակիչներն անվտանգային մարտահրավերների հետ մեկտեղ չհայտնվեն նաև տեղեկատվական վակուումում և անորոշության մեջ:
- լրացուցիչ միջոցներ ձեռնարկել ուղիղ նշանառության տակ գտնվող դպրոցների ու մանկապարտեզների անվտանգության երաշխավորման համար՝ ներդնելով ստեղծված իրավիճակին համապատասխանող անվտանգային մեխանիզմներ և իրականացնելով իրազեկման հանրային արշավներ և վարժանքներ,
- վերանայել ռազմական դրության կամ արտակարգ իրավիճակներում (ճգնաժամային իրավիճակներում) գործողությունների պլանները՝ դրանք դարձնելով առկա իրավիճակին համադրելի, առավել գործուն ու ճկուն,
- համայնքների բնակիչների համար առավել հաճախ կազմակերպել և իրականացնել քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ: Շատ կարևոր է նմանատիպ միջոցառումների իրականացումը նաև ուսումնական հաստատություններում, այդ թվում՝ մանկապարտեզներում և դպրոցներում,
- միջոցներ ձեռնարկել խմելու ու ոռոգման ջրի հասանելիության խնդիրը լուծելու ուղղությամբ:

ՀՀ մարդու իրավունքները պաշտպանը առանցքային է համարում միջազգային կառույցների, մարդու իրավունքների պաշտպանության մանդատ ունեցող միջազգային կազմակերպությունների ու դերակատարների պատշաճ արձագանքն ու հասցեական իրավական գնահատականը Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի բնակիչների իրավունքների խախտումների վերաբերյալ, իրենց մանդատից բխող ակտիվ ջանքերի գործադրումը այդ խախտումները վերացնելու ուղղությամբ, այդ թվում՝ Եվրոպական դատարանի կողմից Ադրբեջանի նկատմամբ միջանկյալ միջոցների կիրառումը: Այս համատեքստում առաջարկվում է՝
- շարունակել ադրբեջանական զինծառայողների գործողությունների, ինչպես նաև սահմանամերձ բնակավայրերի բնակիչների անվտանգությանը սպառնացող

շարունակաբար դրսևորվող ագրեսիվ վարքագծի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և ամփոփման հետևողական աշխատանքները՝ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանին, Արդարադատության միջազգային դատարանին, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության մանդատ ունեցող այլ միջազգային դերակատարներին համապատասխան տեղեկությունների ներկայացման նպատակով:

- պարբերաբար միջազգային իրավական ատյաններին տեղեկացնել Ադրբեջանի համար պարտավորություններ սահմանող՝ Եվրոպական դատարանի և Արդարադատության միջազգային դատարանի որոշումների կատարման ընթացքի, դրանց խախտումների մասին: